

քո Փրկիչդ Գէթսեմանէումն աղօթք արաւ թէ՛ Հայր, ոչ թէ իմ,  
այլ քո կամքդ լինի։ Երանի քեզ եթէ որ քո հաւատգ, սէրդ  
ու յոյսդ սրտիցդ չես հանել։ Ամեն մի մարդու, որ համբերել է  
մինչեւ վերջն, իւր ունեցած հաստատ հաւատը չկորցնելով իւր  
Ստեղծողի վրայ, մեր երկնաւոր Տէրը պսակել է յաղթութեան  
այն սուրբ պսակովն, որ Յիսուս իւր ճշմարիտ աշակերտներին  
խոստացել է։ Մարդուս սրտից թող արիւն գնայ, աչքիցն հե-  
ղեղի պէս արտասուք թափի — ով ինչ կարող է ասել, ով կարող  
է մեղադրել նրան — ինչու որ կորցրած բաղդաւորութեան  
վրայ մեր տրամելը մարդութիւնից դուրս բան չէ. — բայց քա-  
ջասիրտ մարդն իւր մահուան անկողինքի մէջ էլ չի ընկճուիլ,  
ինքն իրան չի կորցնիլ։ Նրա սիրու չի կոտրուիլ, չի թուլանալ,  
երբ որ, իւր քաշած ցաւերից տանջուելու միջոցին, մահուան  
սաստիկ վախն էլ վրան գայ։ Նա գիտէ, որ իւր Փրկիչը կենդա-  
նի է. գիտէ, որ Աստուած սիրողների համար ամեն բան բարի  
է, և թէ՝ սարսափ բերող ցաւերի գիշերն անց կենալուց յե-  
տոյ, մի յաւիտենական ու երջանիկ առաւօտ պիտի լուսանայ,

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

*Բացախչանք և երանուած շնորհեաւ:*

Բնական է քաղաքակրթութեան մէջ յետ մնացած աղգերին  
հետեւող վիճակի մէջ գտանուիլ։ Այս գիրքը բռնում են  
ամեն այն ազգերն, որոնք սթափելով տգիտութեան խորը քնից  
սկսում են կեանքի ամեն ճիւղերին վերաբերեալ ձեւերն ընդօ-  
րինակել աւելի քաղաքակրթուած և լուսաւորեալ աղգերից։  
Այս է վիճակն անխտիր թէ մեծ և թէ փոքր, թէ քաղաքակա-  
նապէս անկախ և թէ մանաւանդ հպատակ աղգերի, որոնք  
մարդկութեան քաղաքակիրթ և լուսաւորեալ մասնից յետ են  
մնացած մտաւոր զարգացման կողմանէ։ Զգտումն ազնիւ է.  
Քանի որ նա վերաբերում է ձգտողների թէ անտեսական, թէ  
մտաւոր և թէ բարոյական կատարելագործութեան, և այդ

ձգտումն աւելի մեծ է լինում և առանց ընտրողութեան այն ազգերի մէջ, որոնք իրանց ընդունակութեամբ և վառ երեւակայութեամբ աւելի յափշտակուող են լինում և կամ չունին իրանց ձգտումները չափաւորող զեկավարներ, որոնք երբէմն իրանք ևս իրանց անհեռատեսութեամբ և կոյր հետեղութեամբ օտարաց, աւելի ևս դէպի անդունդ են առաջնորդում խեղճ, բայց դէպի մոտաւոր և մարդավայիկ կեանք եռանդով ձգտող ազգակիցներին։ Այդպիսի ազգերի զեկավարներն ոչ թէ միայն այն ազգերի կեանքն պիտի հետազոտեն և ուսումնասիրեն, որոնց հետեւ են ձգտում, այլ նախ հիմնապէս պէտք է ուսումնասիրեն իրանց ազգի կեանքն և գտնեն նորա կեանքի մէջ այն գլխաւոր խնդիրներն, որոնք բարեփոխութեան կարօտ են, և ոչ թէ աշխատեն խախտելու նորա բոլոր կենսական տարրերն և ջանան նրան մի օտար ազգի կեանքով ապրեցնել, որ դէպի ազգի կորուսոր միայն կառաջնորդէ և նորա գոյութեան կապառնայ։ Այս նկատողութիւնն ոչ միայն մեր ազգային զեկավարներից շատերն էլ, որոնք մոլեռանդութեամբ կուրօրէն հետեւում են արեւմտեան եւրոպական ազգերին, փոխ առնելով նրանցից ամեն ինչ անխորի. ուստի և ենթարկուում են աւելի խոչեմների և հեռատեսների արդար դատապարտութեան։ Այս վնասակար կոյր հետեղութիւնն օտարաց ոչ միայն ազգի տնտեսական, քաղաքական, հառարակական, ընտանեկան, մոտաւոր ու բարոյական կետնաքի մէջ բարեփոխութիւն մոցնել ջանում է, այլ և եկեղեցու, ազգի կրօնական կեանքի մէջ, կրօնական հայեցուածքների մէջ, որոնք արեւմտեան հին քրիստոնեայ եկեղեցիներից պիտի ուսանէին և իրանց եկեղեցական կեանքը համեմատ նոցա վարդապետութեանց և աւանդութեանց բարեփոխէին, քանի որ մի քրիստոնեայ եկեղեցւոյ քարեփոխութեան և բարեկարգութեան հիմքը պիտի մինին առաքելաքարող վարդապետութիւնք և առցա

յաջորդ ոռւրբ հարց ժամանակներից պահպանած են հին քրիստոնեայ առաքելական եկեղեցիներում, որոնցից է և հայ եկեղեցին, որ քրիստոնէութեան նախնական ժամանակներում կատարուած իւր կազմակերպութիւնը—դաւանական վարդապետութեամբ և աւանդութիւններով—գրեթէ անփոփոխ պահպանած է մինչև ցայժմ, ըստ օրինակի նախկին քրիստոնէից, միշտ հալածանաց և տանջանաց բովի մէջ զոուելով ցայսօր ժամանակի: Բայց դժբաղդաբար այդ կոյր ձգուածն դէպի օտարասիրութիւն, այնքան փակել է մեր աչքերն, որ մենք մեր զուտ ոսկին օտարի արծաթի ու պղնձի վերայ փոխելը անգամ յառաջադիմութիւն և անհրաժեշտ կարևորութիւն համարելով, կազմել ենք մեր մէջ հայ քաթողիկ, հայ բողոքական և այլ կրօնական հաստրակութիւնք: Այս մեր հայեցուածքի համար աւելի յարմար ենք տեսնում մի բողոքականի գրուածքներից քաղուածօրէն հաղորդել նորա հայեցուածքները թէ արևելեան եկեղեցեաց և թէ բողոքական եկեղեցու վարդապետութեանց ու աւանդութեանց վերայ, որոնք համեմատելով միմեանց հետ գտնում է աւաջինները գերազանց և համաձայն առաքելական քարոզութեանց: Այդ ջերմեռանդ բողոքականն, որ երկու տարի առաջ վախճանեցաւ, իբրև հարազատ զաւակ իւր եկեղեցու, 18 տարի Ռուսաստանում ապրելով ուսումնասիրել է արևելեան եկեղեցիք, առաւելապէս յունականն, և համեմատելով նրանց բողոքականի հետ, գտնում է վերջինին վարդապետութիւնն ու ծէսերը շատ և շատ հետու առաքելոց քարոզութիւններից և քրիստոնեայ նախնական եկեղեցիների ծէսերից, թէև նորա՝ բողոքական եկեղեցւոյ հիմնագիրները բաժանուելով քաթոլիկ եկեղեցուց, իբրև թէ ցանկացել են մերձենալ նախկին գարերի քրիստոնէութեան և իրանց եկեղեցին ձեւակերպել նախնական առաքելական եկեղեցեաց կազմակերպութեամբ, ըստ ամենայն մասանց: Այս բողոքականը, հմուտ իւր եկեղեցու աստուածաբանութեան և պատմութեան, քաջ ուսումնասիրած լինելով և արևելեան յունական եկեղեցին, կազմեց

իւր երկասիրութիւնն, որ կոչուում է «Բողոքական հայեցակէտ, Մի բողոքականի խորհրդածութիւնք» Protestantische (Standpunkt. Bedenken eines Protestanten) որ գերմաներէն լեզուով հրատարակուեցաւ Քերլինում 1870 թ. և ռաբերէն թարգմանութիւնը Ռիգայում անցեալ 1889 ամի, թարգմանիչն է ռուսաւագ քահանայ Տ. Սերեդինսկին: Այս երկասիրութիւնը կազմած է վեց գլուխներից, որոնց առաջինը իրեւ նախերգանք է և բովանդակում է խորհրդածութիւններ եկեղեցեաց բաժանման և Գերմանիայի կրօնական յեղափոխութեան մասին (Լուտեր): Յարգելի հեղինակի հայեցուածքով Հռովմն է երկուսի պատճառն էլ: «Հռովմից ծագեցաւ բաժանումն (եկեղեցեաց): Հռովմի եպիսկոպոսների ոչ թէ իրանց միայն պատիւ սեպհականելուց, այլ և Քրիստոսի եկեղեցու մէջ դատաւորի գերստանձնել ու ձգտումից յառաջ եկաւ բաժանումն: Նթէ Հռովմի եպիսկոպոսներն, ասումէ հեղինակը, չփրուէին գուռոզութեամբ և իշխանափառութեամբ, որքան օգուտ նոքա կրերէնն Քրիստոսի Ա. եկեղեցուն, որչափ շնորհաբեր կլինէին նոքա դարա համար: Նոքա իրեւ քերովքէք կարող էին պաշտպանել եկեղեցու իրաւունքները պետական իշխանութեան դէմ և պահպանել նրանց յեղափոխութիւններից և անպատեհ միջամտութիւններից: «Բայց պապականութիւնը միանգամբ սխալ ճանապարհի վերայ կանգնած, առաջ գնաց այդ ճանապարհով՝ — և առաջացրեց դիմադրութիւն, մաքերի մեծ յուղումն— կրօնական յեղափոխութիւնը: Սա մարդոց մէջ եկեղեցւոյ վերածնութեան յօյս զարթեցրեց: Հեղինակը հարցնում է. «Բայց յեղափոխութիւնը կատարեց արդեօք մարդոց ակնկալութիւնքը, հասցրեց արդեօք Քրիստոսի եկեղեցին իւր նախնական պարզութեան»: Թէև բողոքականութիւնն և ծանրութեամբ ձգտում է հաստատելու այս, բայց անկողմնասէր և բարեխիղն հետազօտութիւնք քրիստոնէական հնութեանց այլ եզրակացութեանց են հասցնում և ցոյց են տալիս էական տարբերութիւնք բողոքական և նախնական քրիստոնէական եկեղեցեաց մէջ: Իրաւ է հեղինակն, իրեւ հարազատ բողոքական, ընդու-

նում է որ բողոքականութիւնը թէե մեծ բարիքներ է տուել մարդկութեան (?) բայց միենոյն ժամանակ խոստովանում է, որ այն մարդն ես (Լուտեր), որ բարեխղճաբար հանդէս է բերում ճշմարտութիւնը և աշխատում է նրան կեանքի մէջ իրագործել, կարող է գործել սխալներ, որոնք վերաբերելի են ոչ թէ նոյն իսկ ճշմարտութեան, այլ մարդկային կարճատեսութեան և կրից: «Եւ որ Լուտերի յեղափոխութեան գործն էլ մարդկային անկարողութեան այդպիսի հետեանքներից ազատ չմնաց, որ ընտրած միջոցները համապատասխան չէին բարի դիտաւորութեանց՝ և որ մարդկային կիրքը յաճախ սահմանն անցած է»—այս ոչ մի անկողմնասէր մահկանացու չէ կարող չխոստովանիլ, ասում է հեղինակը: Բայց այստեղ էլ յանցանքը Հռովմինն է, որ չկամեցաւ բաւարարութիւն տալ ազգերի յուղուած հոգեւոր պահանջներին և ուղղեց յեղափոխութիւնն այնպիսի ճանապարհներով, որոնք շեղուելով օրինաւոր ընթացքից, պէտք է չհասցնէին ճշմարիտ և արդար նպատակին: Յարգելի հեղինակի կարծիքով եկեղեցական յեղափոխութիւնը կարող էր կատարուել կամ ընդհանրական ժողովով և կամ Աստուծմէ առաքած, Հոգեւով Սրբովներշնչուած մարդարէական և առաքելական զօրութեամբ գործող անձանց միջնորդութեամբ, Բայց ընդհանրական և այն ազատ ընդհանրական ժողովով կաթոլիկ եկեղեցում աներեւակայելի էր, որովհետեւ ժողովական հեղինակութիւնը վաղուց ոչնչացրած էր նորա մէջ. պապերն էին ամեն հեղինակութիւն իրանց ոեպհականել. չկային և այնպիսի անձինք, որոնց մարդարէական և առաքելական կոչումն վկայած լինէր. որովհետեւ եկեղեցական յեղափոխութեան գլուխ անցած էին լոկ բարեպաշտ և ընդունակ մահկանացուք միայն: Առքա, աեսնելով որ Հռովմը քրիստոնէական աւանդութիւնը ի չարը գործ դրած էր, փոխանակ իրանց աչքը արևելք դարձնելու. ուստի ծագած էր քրիստոնէութիւնն և ուր կային նախնական կերպարանքը պահպանած քրիստոնեայ եկեղեցիք, նախապաշարմունքով լի սոցա մասին. որ Հռովմից ժառանգած էին, իրանց մարդկային

մաքով վճռեցին խնդիրը, մերժելով ամեն քրիստոնէական աւանդութիւն և ընդունելով նորակազմ բողոքական եկեղեցու վարդապետութեան և կազմակերպութեան համար իրեւ հիմն միայն Սուրբ Գիրքը, որոյ հետեւանքն եղաւ ապագայում, որ այդ նորահիմն եկեղեցին տակաւ առ տակաւ ոկտակաւ լուծուիլ և բաժանուիլ իւր մէջ, որովհետեւ, ինչպէս և յարգելի հեղինակն ասում է, քրիստոնէական եկեղեցի, հիմնած միայն սուրբ Գրոց վերայ առանց աւանդութեանց, աներեւակայելի է: Այսքանը իրեւ նախերգանք կազմում է յարգելի հեղինակի երկասիրութեան առաջին գլուխը կրում է, Ս. Գիշտ, որ և առաջապահնեւն, վերնագիրը:

Այստեղ նա նախապէս յայտնելով, որ իրեւ քրիստոնեայ կատարելապէս պաշտում է Աստուծոյ խօսքը, միայն կամենում է գտնել « իանոնա—որ չոխարաց յաշաբերա—նիւն Ս. Գրոց և էլեղից—մէջ », հեղինակն ապացուցանում է, որ քրիստոնէական եկեղեցին հիմնուած է ոչ թէ Գրքով, այլ Փրկչի և առաքելոց կենդանի խօսքով—քարոզութեամբ, որ սուրբ Գրոց գրի առնուիլը կատարուեցաւ յետոյ, երբ « արդէն էլեղին կաղմակէրպուած էր, իբրև կաղմ մարմին, որ սուրբ Գիրքը աղդեցութիւն չէ ունեցել նորա կազմուելու վիրայ և որ նոցա մէջ (Ս. Գրոց) եկեղեցին յիշատակուում է իրեւ արդէն գոյութիւն ունեցող առարկայ, որ նոր Ուխտի սուրբ Գրոց հաւաքածուն կազմուեցաւ գրեթէ մի գար ուշ եկեղեցու հիմնարկութիւնից յիշ, սորա հեղինակութեամբ, որ ղեկավարուում էր Ս. Գրոց ցանկի կազմութեան մէջ ս. աւանդութեամբ, այնպէս որ Ս. Գիրքը, կարծես, նախնական եկեղեցւոյ սուրբ աւանդութեան ձուլածոյ կապարն է և որ սուրբ Գրոց ճշմարիտ բացարութիւնը յատուկ է միայն եկեղեցւոյն, որ պէտք է կանարէր այն համաձայն իւր աւանդութեան, իրեւ պահապան իւր բանաւոր աւանդից: Ուստի և աղքիւր հաւատոյ անհրաժեշտ է ճանաչել ոչ միայն Ս. Գիրքն, այլ և աւանդութիւնը: « Ս. Գիշտն և առանդունիւն ոկտիս և անընդհադաբար մըմւանց լըացնէն և առաջէն և եկեղեցու սրբազն պարաքն է հսկել, որ ոչ առա-

Զինը ենթարկուի սխալ կամաւոր բացատրութեան և ոչ երկրորդը խեղաթիւրուի և չարագործութեան առիթ տայ: Հոռովմայ եկեղեցու Ս. աւանդութիւնն ի չարը գործ գնելը ստիպեց Գերմանիոյ եկեղեցական յեղափոխիչներին բալը զին հրաժարուիլ չքանից և մնալու իսկ անհանին և ճշնարիք առանդունեան իլլու և նշանակունիւն լուսը: Ի՞նչ եղաւ այս ընթացքի հետեւանքը — հարցնում է հեղինակը . . . : Ս. աւանդութեան մերժմամբ բողոքականութիւնը խանգարեց վերպիշեալ փոխադարձ յարաքերութիւնը (Ս. Գրոց և աւանդութեան մէջ), խզեց իւր կապը նախնական եկեղեցու հետ, թողեց նորա պատմական հիմքն ու իւր տունը կախած թողեց օդի մէջ, ենթարկուած ամեն հողմի կամաւոր շարժման: Եւ այս նորանիցն է, որ աւանդութեան մերժմամբ ոչնչացաւ և եկեղեցու հեղինակութիւնն, եկեղեցու, որ միայն պահապանն և մեկնիչն է յայտնուած ճշմարտութեանց: Իրաւ է յեղափոխիչները կամեցան առաջն առնել կամայականութեան, նոքա շարադրեցին հաւատոյ դաւանութիւն և հանգանակի զիրք: Բայց ինչ հիման վերայ կարող էին նոքա յետագայ սերունդից պահանջել յարգանք դէպի իրանց այդ հանգանակական գրքերը, քանի որ իրանք զլացած էին իրանց յարգանքը դէպի քրիստոնէ ական հնութեան հեղինակութիւնն և ժողովների կանոնական որոշումները: Ուստի և հեռաւալներն ու բանապաշտները մերժեցին յեղափոխիչների հեղինակութիւնն և իրանց մոլորութիւնքը պաշտպանելու համար հիմնում էին նրանց Ս. Գրոց վերայ, տալով սորա գրուածոց իրանց կամայական բացատրութիւնը. միթէ միւնոյն ծաղկից մեղուն մեղը և սարդը թոյն չեն քաղում: Ուստի յեղափոխիչները յաւիտենական կեանքի ոյժ էին քաղում, այն աղբիւրից նոցա յետագայ սերունդները իրանց մոլորութեանց հիմքը քաղեցին, այս չնախատեսան և գուցէ չէին էլ կարող նախատեսանել յեղափոխիչները: Բացի սրանից Ս. եկեղեցւոյ աւանդութեան մերժմամբ Ս. Գէրժն ու միայն մարդկային մորթի անցնական հանդական հատուցողութեան և բացադրութեան յանշնության, այլ և ուրաքանչափ անհաղութեան և դադապառանին: Յեղափոխիչների վատ

օրինակին հետեւելով, առաւելապէս Լուտէրի, որ տարակումանք յայտնեց Ս. Յակոբոս Առաքեալի թղթոյ իսկութեան մասին, յաջորդ սերունդները քննութեան սուր գանակով կորեցին սուրբ Գրքից այն ամենն, որոյ ստուգութիւնը իրրե թէ նոցա կարծիքական—պատմական քննադատութեան կասկածելի երեւցաւ և անհասանելի նոցա լուսաւոր մոքին (?), քըննադատեցին և մասամբ խեղաթիւրեցին կենաց խօսքը, մինչեւ իսկ այն պատմական իրողութիւնք, որոնք վերաբերում էին մեր փրկութեան տնօրէնութեան, առասպել համարեցին։ Իրաւ և այս ամենն առաջ բերեց մեծ հոգեւոր պատերազմ՝, որ հաւասարակշռեց կարծես չարիքը բարեաց հետ։ բայց և այնպէս շայտանի և ամօնակար է, «ը անհաւասարութեանը կարողանամ է այնպէս ընդունյահ արմառնեց յգել բաղստական Ելեղիցու մէջ»։ Ա. յսպէս նոյն տան մէջ, որ կանգնեց բողոքականութիւնը, կողք կողքի ապրում են եւ ջերմեռանդ հաւատն եւ կատարեալ անհաւատութիւնը և երկուսն էլ հաւատիացնում են որ տան օրինակիչներն են»։

Երկրորդ գլխի վերնագիրն է «Եկեղեցի և Առաքածածկաշատիւննեան»։ Այսաեղ հեղինակը նկարագրելով մէ առաջի, ընդհանրական և առաջելական եկեղեցւոյ ճշգրիտ պատերը, գտնում է, որ նորա գծերը կաթոլիկ եկեղեցու մէջ իւղանիքառած են իսկ բողոքականի մէջ նշանաւոր կերպով անհետացած։ Մինչդեռ հոգմէտական քաթոլիկութիւնը շատ սահմանափակում է եկեղեցւոյ գաղափարի սահմանները, բողոքականութիւնն այնքան ընդարձակում է այն որ եկեղեցւոյ գաղափարը բոլորովին վերանում է։ Բողոքականաց Աւգուստուրդի դաւանագրով ճշմարիտ եկեղեցին երկու նշան պիտի ունենայ։ նախ ճշմարիտ քարոզութիւն աւետարանի և երկրորդ սորտն համեմատ մտափարուրումն սուրբ Խորհրդոց։ Բայց մղպէտք է վճռէ, թէ երկուսն էլ օրինաւորապէս կատարուում են, հարցնում է հեղինակը՝ այսպիսի ստուգող չկայ և ամենայն ինչ թողած է անձնականութեան։ Եթէ ընդհանուր կազմուածքի մէջ առաջինը (քարոզը) ընդունելու լինինք իրրե շունչ և երկրորդն (ո. խորհուրդնե-

րո) իբրև սրտի բաղխումն — գեռ գոքա երկուսն էլ չեն կարող երաշխաւորել բալոր կազմաւածքի ամսող ջութեան և առողջութեան որովհետեւ գոցա գոյութեան ժամանակ էլ կազմուածքի այս կամ այն անդամը կարաղ է խեղաթիւրած լինել կամ թուլացած: ուստի և կազմուածքի ամբողջութիւնը խոնդարուած: Բայց ուր իրականութիւնը բաւարարութիւն չէ տալիս, մարդիկ ձգտում են դէպի իդէալական տշխարհն՝ անտեսանելին: այսպէս էլ բողոքականները դիմում են դէպի վարդապետութիւնը անտեսանելի եկեղեցու, որ Աստուծոյ միայն տեսանելի է: իբրև ժողով ճշմարիտ և սուրբ քրիստոնէից: Բայց անտեսանելի եկեղեցին չպէտք է գոյութիւն ունենայ արտաքոյ կապի տեսանելի եկեղեցու հետ, այլ պէտք է սրբն թափանդէ և սրբագրութէ: Յ և Յ ապիստիս բարձրացնելու նամակ գրած առ առ նոյնպէս և բազոքականութեան վարդապետութիւնը ընդհանուր քահանայութեան մասին, չէ կարող վարժառորել նրան այն վիճակի համար, որ կրեց եկեղեցական նուիրապետութիւնն ոշնչացնելով, ասում է յորգելի հեղինակը: Նուիրապետութիւնն ամենելին մարդկային կարգադրութիւն չէ, այլ առուածային հաստատութիւն է, նախնական քրիստոնէական եկեղեցին համարակաց քահանայութեան մասին գաղափար չունելը և շատ հեռու էր հոգեուոր Հովհաններին լոկ: Հուատուրմատար համարելուց նուիրապետութեան ջնջուելը, բողոքականութեան եկեղեցին անելուացաւ հօպի մէջ: Յ Ճայական մարդաբանական:

Եկեղեցական յեղափոխութիւնը ոչ արդիւնաւոր ազգ եղութիւն ունիցաւ եւ աստուածապաշտութեան վերաց: Մինչդեռ արևելեան եկեղեցեաց աստուածապաշտութիւնն ոչ միայն ուսուցանում է ժողովրդեան ճշմարիտ վարդապետութիւն, ոյլ եւ զգալի կերպով ցուցանում է նրան փրկութեան գործի բոլոր դէպիքերը ժամանակագրական կարգով և իւր հարուստ ժամակարգութիւնով մեծ ոպաւորութիւն է գործում: բողոքականութեան մէջ մինչեւ իսկ պատարագի կարանութեան կամ ամեն տօն և կիրակի օրերի աստուածապաշտութեան կենտրոնը և նորհանուր աղօթքն ու սուրբ գրոց

ընթերցանութիւնը շտո սահմանափակուած է քողքական եւ կեղեցում և աստուածաշպաշտութեան գլխաւոր հիմք՝ քարոզն է նշանակած, որով և հօտի շինութիւնն ու կրթութիւնը բոլորովին կախուած է քարոզյի անձնաւորութիւնից։ Այսպէս առում է հեղինակը, մեր (բողոքական) եկեղեցու ամեն հանդամանքներում մի միայն անհատականութեան պատկերն ու կեանքն ենք տեսնում։

**Զորրորդ գլուխը Ա.** Խորհուրդների մասին է խօսում։ Հեղինակն ընդունում է որ Ա. Եկեղեցւոյ խորհուրդները եօթն պիտի լինին, որոնց իւրաքանչիւրի մասին Ա. Գրոց մէջ կայ աւելի կամ պակաս պարզ ակնարկութիւն։ բացի սրանից աղանդների մէջ (Վ գարի միարենակք և նեստորականք) բոլոր եօթն խորհուրդների գոյութիւնն և սրբութեամբ պահպանութիւնը վկայ են, որ նոքա լնդհանրական եկեղեցու մէջ բուլորն էլ ընդունուած և սրբութեամբ պահպանուած էին։ Բողաքական յեղափոխիչները նոցանից մի քանիսի մերժումն հիմնում են նորա վերայ, որ իբրև թէ նոքա կորցրած են ներկայումն շնորհաբաշխական բնաւորութիւնն, որ ունէին Առողեւոց ժամանակ։ Բայց դժուար է արդարացնել այսպիսի կարծիքն, ասում է հեղինակը։ Շնորհքը չէ վերացել եկեղեցուց, այլ նահրապարակական ասպարեզից անցել է ջերմեռանդ հաւատով իր սրտերի խորշերը, միայն չհաւատացովների համար այդ շնորհքը վերացած կամ ջնջուած է երեւում։ Մկրտութեան ժամանակ էլ հօ ներկայումն որ և է արտաքին հրաշք չէ երեւում, հապա ինչու յեղափոխիչներն այն ընդունել և թողել են իբրև եկեղեցական խորհուրդ։ Յարգելի հեղինակը զիջանելով—առում է, ընդունննք թէ այսօր շնորհաբաշխութիւնն ի ձեռն Ս. Խորհրդոց դադարել է, բայց ի՞նչ իրաւունք ունինք կարծելու, որ նոյնը չի կրկնվիլ այն բողէին, երբ այդ Աստուծոյ կամքը կլինի։ Զեակատարութիւնն այնքան էլ անտարբեր բան չէ, որպէս կարծում են բողքականները։ Ըողոքականաց

Հայեցուածքը նոյն իսկ ամենամեծ եկեղեցական խորհրդի մասին, այն է Ս. պատարագի խորհրդի, տարբերութեամ է նախկին քրիստոնէից հայեցուածքից, նա Ս. պատարագը զոհ չէ համարում, մինչդեռ նա իսկապէս զոհ է, Ապա խօսում է խոստովանութեան և ապաշխարութեան մասին ասելով՝ որ բողոքականութիւնը չէ մերժում խոստովանութիւնն քահանայի առաջ, բայց այս կամայ թողած լինելով ներկայ բողոքականն և ոչինչ գիտէ, թէ իւր եկեղեցին ընդունում է խոստովանութեան այդ ձեզ: Սյստեղ նա մեծ կշիռ տալիս է բողոքական եկեղեցւոյ ընդունած վարդապետութեան, թէ հաւատով միայն կեցցես: Յարգելի հեղինակն այդ վարդապետութիւնն բողոքական եկեղեցւոյ ճանաչելով հիմնաւոր և նորա զարգըմուանում է, որ գրանով ինքն իրան հակասում է, առաջիկայ գլուխներում պաշտպանելով արեւելեան եկեղեցեաց ընդունածներն՝ այն է սրբոց բարեկիսոսութիւնն, եկեղեցւոյ ազօթքը ննջեցելոց և ապաշխարովաց համոր, քահանայի իշխանութիւնը մեղքերը թողնելու, ծոմ, պահեցողութիւնն և այն, որոնք բողոքականը մերժում է և չէ ընդունում, հէնց վերոյիշեալ—հաւատով՝ մայն կեցցեա վարդապետութեան հիմնավերայ, որով բողոքականն ինքն իրան անմիջապէս Քրիստոսի հետ յարաբերութեան մէջ է համարում: Երկէ միջնորդութեան անկարուտ:

Հինգերորդ գլխում խօսում է հեղինակը սրբոց մասին, աղօթք վասն հանգուցելոց, յարգումն և աղօթք սրբոց: յարգումն ս. պատկերների և մասանց: «Բողոքական եկեղեցին քանդել է կամուրջն, որ տանումէ պատերազմող եկեղեցուց դէպի յաղթական եկեղեցին, նա զրկում է հանգուցելոց հոգին այն մեծ շնորհքից, որ է եկեղեցու աղօթքը նոցա սրբագործելու համար: Իսկ կենդանի մնացողներին զրկում է այն միսիթարութիւններից, որոնք պատճառում են նրանց աղօթողների խորքից ծագած զգացմունքները»: Իսկ բողոքականաց հա-

յեցուածքը՝ թէ հանգուցելոյ վիճակն մշտապէս որոշուում է նորու մահուան բռպէին, ուսուի և աղօթքը նորա համար աւելրդ է, ամենեին հիմք չէ գոտում սուրբ Գրոց մէջ, այլ և հակոռակ է նախնական եկեղեցւոյ հայեացքներին ու ըստ է-ութեան էլ անպաշտպոնելի, որովհետեւ աւազակի հաւատոյ օրինակն (որոյ վերայ հիմնուում են բողոքականք) հասարակութեանց ներկայ վիճակի մէջ շատ հազուագիւտ գէպքերին վերաբերելի է և հոգին հանգուցելոյ թէկուզ մարմնոյ բաժանվելու վերջին բռպէն եւ հաւատոյ, այնու ամենայնիւ նա ունի կատարելիք սրբագործուելու համար ապագայ կեանքում։ Ընդունենք, ասում է հեղինակն, որ հանգուցելոյ հոգին յիրաւի չէ կարօտում մեր աղօթքին. բայց ի՞նչ վնաս կարող է առաջ գալ մեր միջնորդութիւնից. բայց յեղափոխիչները միրժելով նախնական եկեղեցու այդ վարդապետութիւնն զրկեցին մեզ բողոքականներիս շատ միսիթարութիւններից։ Որքա՞ն միսիթարական են արևելեան եկեղեցեաց սովորութիւնքը կենդանի մնացողների սրտերի համար։

Առ այս սխալ է և այն ասում է հեղինակն, որ Առաքելական թշրոց մէջ չկայ յիշատակութիւն սրբոց միջնորդութեան մասին։ Նա առաջ է բերում առաջին Կորնթ. գլ. ծն, 29 և Եբր. ՓԲ. 22–23։ Մանաւանդ գայթակեղեցուցիչ է երեսում բողոքական հասկացողութեան և հայեցուածքի համար մասնց և պատկերներին տրուած յարգանքը։ Բայց յայտնի բան է այստեղ մեծ կշիռ ունին հովիւների իմաստութիւնն ու արթնութիւնն, որ գործը կռապաշտութեան և վայրենի պատկերամարտութեան չհասնի։ Արևելեան եկեղեցեաց վարդապետութիւնն այս մասին ծայրայեղութեանց միջին տեղն է բըռնում։ Վերաբերութեամբ մասնց յարգանքի և նոցանից կատարուած հրաշալի բժշկութեանց, հեղինակը զարմանում է բողոքականաց անհետեղականութեան վերայ այդ մասին։ Եթէ բողոքականն, ասում է հեղինակը, հաւատարիմ իւր հայեցուածքին, հաստատուն է նորա վերայ, թէ ինքը չէ ընդունում այն ինչ որ Ս. Գրոց մէջ չկայ, ուրեմն և չպիտի մերժէ

այն, որոյ մասին վկայում է Ս. Գիրքը և որոյ իրական օրինակները ցոյց է տալիս այստեղ հեղինակը և մատնացոյց է լինում Զորբորդ. Թագ. ծԳ. 21 և Գործ. Առ. Ե. 15 և Ժ. 12 վերայ:

Վեցերորդ գլխում հեղինակը խօսում է պահոց և կրօնաւորութեան վերայ:

Նկեղեցական յեղափոխիչները բոլորովին չմերժեցին պահքը, միայն նրան կամաւոր ճանաչեցին, որոյ հետեւանքն այն եղաւ որ ներկայումս ոչ մի բողոքական կարեռը չէ համարում կատարելու եկեղեցու այդ օգտաւէտ կարգադրութիւնը։ Պահքը վարժեցնում է քրիստոնէին հեշտութեամբ հրաժարուելու մարմնաւոր քաւականութիւններից և մարմինը հոգուն հնազանդեցնել սովորցնում է։ Եթէ եկեղեցին, կարեռը է համարել նշանաւոր տօների տօնախմբութիւնն աւելի հանդիսաւոր անելու համար յաջս հաւատացելոց, կարգել պահք, որով նոքա նախապատրաստուէին հոգեպէս այդ տօների համար, ոչ մի անդամ եկեղեցոյ իրաւունք չունի շեղուելու այդ կարգադրութիւնից։ Որովհետեւ պահքը նշանակած է բոլոր եկեղեցիներից, նաև վերջանալ կարող է միայն եկեղեցու որոշմամբ, իսկ իւրաքանչիւր անդամ անձամբ իրան եկեղեցու կարգադրութիւնից ազատ կացուցանելու իրաւունք չունի։

Եեղափոխիչներն ամենեին մերժեցին ճգնաւորութիւնն ու վանական կեանքը։ Նոքա չկարողացան հասկանալ այն հոգեբանական հիմունքն, որից ծագեցաւ վանական կեանքը և որ շատ խորը արմատներ ձգած է մարդկային սրտի մէջ և այս արգելուած ձգտումն նոյն իսկ բողոքական եկեղեցու մէջ նորից ոյժ և զօրութիւն ստացաւ։ Այստեղ այդ հոգեկան պահանջը յայտնուեցաւ բարեպահաշտօնէութիւն (Պիտմզմն) անուամբ, որ հեռու չէ մի տեսակ ճգնաւորութիւնից։ Բարեպահաշտօնէից հասարակութեան ծագումն միայն հետեւանք է բողոքականութեան, վանքերը փակելից յետ, ոչ մի առանձին հոգեկան ձգտման ընթացք չտալուն, այլ միայն եկեղեցու հասարակա-

կան կարիքների մոսին հոգալուն, և այսօր բարեպաշտօնէից ընկերութիւնը օր տևուր հեռանալով բողոքական եկեղեցուց մօտիկ է իւր գաղտնի ժողովներով առանձին աղանդ կազմելուն:

Բողոքական եկեղեցիներից մանաւանդ անդղիականի մէջ տեսնուում է ձգտումն վերականգնելու, բողոքականութեամբ անհետացած, չին եկեղեցական կրօնական կեանքի ձեւերն, այն է ծէսերն ու նախկին սրբագործութիւնք, Վերջին ժամանակ ծագեցաւ այստեղ միտք վերականգնելու կուսակրօն եկեղեցականութեան դասը և այս գաղափարին պաշտպան կանգնեցաւ բոլոր քրիստոնեայ աշխարհին յայտնի անգլիացի աստուածաբան — մատենագիր Ֆորրարը (Կետնք 8. Քրիստոսի, Պողոս Առաքելոյ և այլ երկից հեղինակը), Նա առաջարկեց վերականգնել անդղիական եկեղեցում՝ կրօնաւորական կարգեր երեք խոստումներով — այն պահպանելով աղքատութեան ողջախոհութեան և հնագանդութեան ուխտը: Նորա կարծիքով այս է ամենարդիւնաւոր միջոցը ներկայ եկեղեցու (Հաւատացելոց) վերքերը բուժելու և ժողովրդեան ստորին դասը վերադարձնելու համար կրկին նորա գոգը: Քահանոյ Նարտը Սառւդէմպտոնում աւելի ընդարձակեց ու բացատրեց Ֆարբարի առաջարկութիւնն և մինչև անդամ առաջարկեց նորակաղմելի կրօնական կարգը կոչել յանուն Սուրբ Յովովրայ: Պետական եկեղեցու եպիսկոպոսները չհակաւակեցին այս առաջարկութեան: իսկ Կենաւերբերի արքեպիսկոպոսը առանձին շրջաբերականով անուանեց այս առաջարկութիւնը նշանաւոր և յայտնեց այն կարծիքը, թէ նրա իրագործութիւնից կարող է շատ օգուտ տռաջ գալ: Այսկունի եպիսկոպոսն, որ իւր չափազանց ծիսապիրութեան համար պատժի անգստ ենթարկուեցաւ, ջերմ պաշտպան հանդիսացաւ այս առաջարկութեան և ոչ մի հեղինակութիւն ունեցող ձայն լլուեցաւ նորա դէմ: Ընդհանուր կարծիք է, որ կուսակրօն եկեղեցական դասը աւելի յարմարութիւն ունի բաւարարութիւն տալու ժողովրդի բազմութեան կրօնական —

բարոյական պիտոյքներին, քան ընտանեաց տէր եկեղեցական-ները, այն ժողովրդեան, որոյ մեծ մասն այժմ այդպիսի գործիչների բացակայութեան պատճառով, գտանուում է եկեղեցու գաւթից գուրու և տւար է գառնում զանազան աղանդա-ւորների մոլար վարդապետութեան:

Քրիստոնէական եկեղեցի առանց նուիրապետութեան անհասկանալի հաստատութիւն է: Ոչ առաքելոց և ոչ էլ նորանից յետոյ այսպիսի եկեղեցի եղած չէ: Քանի որ քրիստոնէական եկեղեցին մի հոգեոր աստուածային հաստատութիւն է, նա առանց նուիրապետութեան աներեւակայելի է, որոյ միջնորդութեամբ Հոգւոյն Արքոյ շնորհքը ծաւալում է նորա անդամների վերայ եկեղեցւոյ սուրբ խորհուրդների մատակարարութեամբ: Այնքան հեռու է քրիստոնէական եկեղեցին աշխարհային հաստատութիւն լինելից, որքան անմահ հոգին տարբերուում է անցաւոր մարմնից, աշխարհս անցաւոր է, բայց քրիստոնէական եկեղեցին շարունակուում է և միշտ (յաղթական եկեղեցի): Աշխարհիս երեսին քրիստոնէական եկեղեցին այնպէս է, ինչպէս անմահ հոգին ժամանակաւորապէս բնակուում է մարմնոյ մէջ: Քրիստոնէական եկեղեցին այս աշխարհիս հաստատութիւն չէ, նորա հիմքն ինքն Քրիստոս Աստուած է, որ իւր ընտրելոց միջնորդութեամբ կառավարում է նրան: Այսպէս էր առաքելոց ժամանակ, նոյնն եղած և նոցայացորդների ժամանակ, որոնք ձեւնադրութեամբ միմեւանց հաղորդում էին Աստուածոյ շնորհքն նորտ Ս. Եկեղեցին կառավարելու համար: Նախկին դարերում մինչեւ իսկ քրիստոնեայ հասարակութեանց նիւթականն կառավարելու և հոգալու համար ընտրուում էին նուիրապետութեան պատկանող անձինք (սարկաւագունք): Եկեղեցին Փրկիչ Քրիստոսինն է, որոյ թագաւորութիւնը այս աշխարհից չէ: Ուստի և երբ քրիստոնէական եկեղեցին աշխարհականացաւ, նա կորցնում է իւր աստուածային հաստատութիւն լինելու յատկութիւնն և գառ-

նում է մի քաղաքական հաստատութիւն և սերտութեամբ կապուելով աշխարհիս հետ դառնում է գործիք մարմնաւոր իշխանութեան։ Հենց այս կէտը՝ բողոքական յեղափոխիչներն աչքից փախցրին և աշխարհականացած քաթոլիկ եկեղեցուց անջատուելով, փոխանակ հոգւոյ և ճշմարտութեան զօրութեան դիմելու իրանց յեղափոխական գործն առաջ տանելու համար և նախնական եկեղեցեաց օրինակին հետելու, յենուեցան իրանց ժամանակի մարմնաւոր իշխանաց ոյժի և պաշտպանութեան վերայ և հիմնեցին մի եկեղեցի, որ աշխարհի է, որ պետութեան է, անկախ հոգեոր հաստատութիւն չէ։ Քրիստոնէտկան եկեղեցու կապն աշխարհիս հետ ինքն Փրկիչն որոշեց «Ճուք զկայսերն կայսեր» խօսքով - այսինքն ինչ որ մարմնաւոր է, մարմնաւոր իշխանութեանն է։ իսկ հոգին Աստուծոյ է, ուստի և Ա. եկեղեցին որ աստուածային է, անկախ հիմնարկութիւն է, որ ունի իւր կառավարիչն աշխարհիս վերայ Աստուծոյ շնորհիւ ընորած նուիրապետութիւնը։ Այս հաստատութեան պակասութիւնը զգացուում է ներկայումն բողոքական եկեղեցու մէջ, որ սկսում է ձգտիլ մի նոր յեղափոխութեան, այն է ձեակերպուելու ըստ նախնական քրիստոնէտկան եկեղեցեաց։ Այս խլրառումն աւելի երևում է անդղիական եկեղեցու մէջ։

Եօթանասուն թուականների սկզբներում երբ կրօնական շարժութիւն ընկաւ բոլոր Եւրոպայի մէջ, երբ նոյն իսկ Քաթոլիկ եկեղեցում բաժանումն ծագեցաւ պապի անսխալտականութիւնն ընդունելու կամ ըլնդունելու առթիւ, երբ կրօնական պատերազմ սկսուեցաւ Գերմանիոյ արքունիքի և Վատիկանի մէջ, Անգղիայում երեւեցաւ ձգտումն Կաթոլիկ եկեղեցու հետ միանալու մասին, որի առաջ առնուեցաւ Կոմն Շափատրիւրիի կազմած մեծ ժողովի ջանքով, իսկ Ամերիկայում մեծ Արևնհոգոս կազմուեցաւ ամերիկայի Եպիսկոպոսների, որ սկսաւ յարաբերութիւն ունենալ յունական եկեղեցու հետ և մի տեսակ միութիւն եկեղեցեաց կազմելու ձգտումն ցոյց տուեց։ Այս միջոցին այդ Սիւնհոգոսը մինչև իսկ մեր հանգուցեալ եր-

ջանկայիշատակ ԳԵՐՈԳ Կաթողիկոսին դիմեց, խնդրելով որ բանքահաճի Հայ Եկեղեցւոյ նուրիապետութեան անդամոց՝ Հայ Կաթողիկոսներին պատրիարքներին, մետրապօլիտներին, արքեպիսկոպոսներին, Եպիսկոպոսներին ցանկն ուղարկելով, որպէս զի, Երեխ, նոցա հետ յարաբերութիւն սկսուի։ Այս գրութիւնը ստացուել է Ս. Եջմիածնում 28 ին օգոստոսի 1873 թ։ Բողոքական Եկեղեցեաց վերոյիշեալ ձգտման միջոցին, կազմակերպուելու համար ըստ նախնական քրիստոնէական Եկեղեցեաց, շատ օգտական էր լինել նոցա Հայ Եկեղեցու ուսումնասիրութիւնը, Հայ Եկեղեցու, որ աւելի քան որեւէ այլ քրիստոնեաց Եկեղեցի պահպանել է նախկին քրիստոնէական Եկեղեցու կերպարանքը թէ ըստ վարդապետութեան և թէ ըստ աւանդութեանց։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Անցեալ Հոկտեմբերի Արարատի համարում Երկու խօսք ասացինք Ս. Աթոռոյս Ճեմարանի պահպանութեան մասին, որոյ բոլոր բեռն ընկնում է Մայր Աթոռոյս աղքատիկ գանձարանի վերայ, մինչդեռ այդ Ճեմարանից Հայ ազգը մեծամեծ ակնկալութիւնք ունի, սպասելով նորանից ընտիր ուսումնական և քարոզիչ Եկեղեցականք։ Ներոյիշեալ յօդուածում մենք յայտնեցինք, որ իրաւանց հետ միշտ սերտութեամբ կապուած են և պարտականութիւնք։ ուստի և Հայ ազգի վերայ Ճեմարանից ընտիր Եկեղեցականներ ստանալու իրաւունքի հետ կայ և պարտականութիւն Հոգալու գէթ կիսով չափ նոյն Ճեմարանի նիւթական միջոցները։ Մենք մինչև անգամ ցոյց էինք տուել, թէ ինչ Եղանակներով Հայ հասարակութիւնք և Հարուստ անհատներ կարող էին օգնել Ճեմարանի պահպանութեան։ Այս մասին ծանրութեամբ և հեռատեսութեամբ խորհելն ազգի ամենամեծ պարտականութիւնն է, նախ այն պատճառով, որ